

# ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ

## Բիւզանդիոնի մեջ

ՊՈՏՄԱԿՈՒԹ ԹՈՏԵՐՈՒԱԴ,

ՄԻԼ ԱՌԱՐՈՒԱԾ

Ի ՆԱԱՍ

Խըլքի Առաջիր-Խոչի Աշխատանքից

ԳՐԵՑ

Printed in Turkey

ԳՐԱՊՐՖ-ՄԵՍՏՐԱԴ

ՏԵՂՄԱՆ ՅԱՎԱ-ՅԱՎԱ ԱՐՔԱՅԻ ՎՈՐԵՎՈՒՅԻՆ ԵՎ ԱՅԱԳԻՎՈՒՅԻՆ

ԱՅԱԽՈՒՅ

891. 99

9 - 47

ՏԵՂՄԱՆ Ա. ՀԱՅԱՀԱ

1909

188.

891.99  
9-47 ԱՐ  
01 JAN 2009  
ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԻՉՆԵՐԸ

Բիւզանդիոնի մէջ 8 DEC 2011

ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԽԱՂ

ՄԷԼ առարուած



405X

Հ. Հ.

Ի ՆՊԱՍ

Եղիշի Կառմիր-Խաչի Արհեստանոցին

Printed in Turkey

ԳՐԵՑ

ԳՀԱՊՐՖ-ՄՆԵՄՐՈՊ

ՏՅՈՒՆ ՑԻՍՈՒՄԵԱՆ ԵՐԿՐՈՒ ՎԱՐԺԱՄԱՆՈՒ ՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ  
(ԹՈՏՈԽԹ-0)

Կ. ՊՈՂԻՄ

ՏՊԱՐՄԱՆ Ա. ՇԱՀ ԵՆ  
(Արքայի)

1909

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սյս բատերախաղը առաջին անգամ ներկայացուած  
է Ռօսուր Օխուսեան Վարժարանի բարձր եւ միջին  
Բ. կարգի աշատակերտերու կողմէ, 1909 Յունիս 18,  
«Սահակայ եւ Մեսոպատամին» առիրով:

Եւ այսօր կը հետարակուի ի նազաս այնպիսի ընկերութեան մը, որ քեւ դեռ երեկի ծնունդ, արդէն խոկ սկսած է հետապնդել զեղեցիկ ու վասն նպատակ մը: Իր տուած հօմնու-լսարաններուն ու վիճակահանուրիւն-հանդիսներուն վիտ հասոյրը մասամբ Սաանոյի արկածեալ-ներուն նման բարեկործական նապատակի մը յատկացուցած, եւ մասամբ տամադրած է Ընթերցարան-Դասըն-րացքի մը եւ Արհեստանոցի մը հաստատումին: Դասըն-րացքի ու Արհեստանոցի նախնական պատրաստուրիւն-ները արդէն կատարուած, Ընկերակցուրիւնը կը յուսոյ անոնց բացումը կատարել յառաջիկայ Սեպտեմբերիմ, երբ, օդափոխութեան եւ զիւղագնացուրեան օրերը վերացած, լուրջ ու ամփոփ գործունեուրեան օրջանը կը սկսի:

Յաջողութիւն իրենց ազնիւ ձեռնարկին:

1909 Օգոստու 1

ԳԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ

Իգիլիս



135

40

ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆԻ ԶՆԵՐԸ

ԲԻՒՋԱՆԴԻՈՆԻ ՄԷջ

ՊԱՏՄԱՆԱԾ ԹԱՏԵՐԱՆԱԾ

ՄԷԿ ԱՐԱՐՈՒԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՏԵՍԻԼ Ա.

(Տեսարան կը ներկայացնէ միջնադարեան և բիւզանդական հաշոկով կանառուած սենեալ մը: Տեսարան բացուելոն Յովանի Պաղմացի քանեզամի մը տաչեւ նատած, ձեռք փետուք գրիչ մը, բարգմանորեամբ կը պարագի: Խալ Եզնիկ Պողոսի գրեոյի մը բրուած՝ յուր ընթեցումի մէջ ընկլիւած է:)

ՅՈՎԱՆԵՓ, ԵԶՆԻԿ, ապա ՄՊԱՍՍԻԹՐԻ

ՅՈՎԱՆԵՓ (Գլուխը հակած, աշխատութեամ զբաղելով) .— Հաւ հունձք մը պիտի ունենանք, Եղնիկ: Թերեւս մնը վարդապետները, մանաւանդ Սահակ Հայրապետը, բարկանան մեր անակնկալ մեկնումն իմանալով, բայց չեւ կարծեր որո՛շ Մաշթոց և ո՛չ /նքը բահարձակուն եափ-ընթացք մը նկատեն մեր այս նախանձումնդրու-թիւնը:

## ԱՆՁԵՐԸ

ՅՈՎԱՆԵՓ ՊԱՂՆԱՑԻ .— ՄԵԿՐՈՎԻ և Սահակի ԵՐԻԳԱ-  
ԳՈՅԻ աշակերտներէն կարողիկոսացած և ապա նա-  
հատակուած ԴԵՌԱՆԴԵԱՆՑ հէս:

ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ .— Հեղինակ-բարգմանիչ «Եղծ Աղան-  
դոց» կամ «Եզնիկ» անուն գրեոյիկին: Ուկեդարու  
բազմարդիւն բարգմանիչներէն:

ԿՈՐԻՒՆ .— Միրեիլ աշակերտ ՄԵԿՐՈՎԻ, և հեղինակ  
«Վարժ Ա. ՄԵԿՐՈՎԱՅ» և այլ գործերու և բարգ-  
մանուրիւններու:

ՂԵՒՈՒՆԻ ԵՅԼԵՑ .— Նշանաւոր դեմք Վարդանանց պա-  
տերազմին մէջ . ապա նահատակուած:

ԱՐՉԱՆ .— ԵՐԻԳԱԳՈՅԻ աշակերտներէն և բարգմանիչ:

ՅՈՎԱՆԵՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ .— (Աշակերտ ՄԵԿՐՈՎԻ), (Կա-  
րողիկոս 478-490). Հեղինակիր անու նոյն նահշցուած  
կարգ մը ընտիր նառերու, եկեղեցական աղօրբներու  
եւալին:

ՍՊԱՍԱՒՈՐ .— Յոյն պատանի մը:

Տեսարանը տեղի կ'ունենաց Բիւզանդիան, պամերիի մը  
սկսնկիմ մէջ:

**ԵԶՆԻԿ** (Յովսեփի դառնալով) .— Յովսեփ, ե՛ղբայր, ինչո՞ւ շատ կը կրկնէք այդ խօսքերը : Մեր վարդապետ՝ Մեսրոպ չէ՞ր որ երբ զմեզ եղեսիա կը զրկէր առորի հայրերուն գործերը հայերենի թարգմանելու պաշտօնով, խոստացաւ նաև դրկել Բիւզանդիոն : Այդ խոստառմը հերիք էր արդէն, և մենք փոխանակ Հայաստան դառնալով կրկին ճամբայ իյնալու, ուղղակի եղեսիայէն մեկնեցանք ու դիմեցինք մեր գործին :

**ՅՈՎՍԵՓ** (Գրուխը կը վերցնէ: ու Եղիկի կը դառնայ) .— Բայց զարմանալին հո՞ն է որ մենք մէկ ամիսէ կոստանդնուպոլիս եկած ենք ու տակաւին չի կրցինք հանդիպել մեր ընկերակիցներուն : Արդեօք չե՞ն եկած դեռ :

**ԵԶՆԻԿ** .— Հաւանական է որ հասած չեն տակաւին : Կրնայ ըլլալ նաև որ Հայաստանէն ընաւ ճամբայ ելած չըլլան :

**ՅՈՎՍԵՓ** .— Այն ատեն զմեզ խափած պիտի ըլլան ինչ որ չեմ կարծեր : Լուր չի բերին մեզի թէ Յովհանն Մանդակունին և Արձան գէպի կ . Պոլիս ճամբայ ելած են թարգմանչական գործին համար :

**ԵԶՆԻԿ** .— Տեսնե՞նք, գուցէ ճամբան գժուարութիւններու հանդիսած են ու չեն կրցած ժամանակին հասնեն : Ամէն պարագայի մէջ այսօր կեսարիոյ կարաւանը կը հասնի և եթէ ստուգիւ ճամբայ ելած են, այ-

աօր անպատճառ հաւանական է որ համարն :

**ՍՊԱՍՈՒԹՐԸ** (Ներս մնելով) .— Երկու երիտասարդ՝ ներ ձեզ կը հարցնեն . օտարականներ կերենան . կ'ու զէք վեր գան :

**ԵԶՆԻԿ** (Յովսեփի դառնալով) .— Մեր ընկերակիցները շրպա՞ն : (Սպասաւորին ուղղելով) Շուտով վեր թող գան : (Սպասաւոր կը մեկնի):

**ՅՈՎՍԵՓ** .— Ռւր էր թէ այդպէս ըլլար :

## ՏԵՍԻԼ Բ.

**ՆԱԽՈՐԴՆԵՐԸ** եի ՂԵԽՈՆԴ, ԿՈՐԻԻՆ

(Եղիկի եւ Յովսեփ ոմի կելեն յուսալից: Ներս կը մնեն Վեսնի եւ Կորիւմ):

**ԿՈՐԻԻՆ** եի ՂԵԽՈՆԴ .— Ողջ՛յն :

**ՅՈՎՍԵՓ** .— Ա՛, Ղեւո՞նդ, Կորի՛ւն, դուք հո՞ս . . .

**ԵԶՆԻԿ** .— Ի՞նչ զուգագիպութիւն է այս . . .

(Կողագուրուին խանդաղաւանօ):

**ԵԶՆԻԿ** .— Ինդրեմ նատեցէք : (Արուներ կը ներկայացնէ, կը նսիի):

**ՅՈՎՍԵՓ** .— Մեզի սխա՛լ լուր բերած էին ուրեմն :

**ՄԵՆՔ** գիտէինք թէ Յովհան և Արձան զրկուած են կոստանդնուպոլիս :

ԿՈՐԻՒՆ .— Ո՞չ , սիսալ չէ . մեր վարդապետները  
Յովհանը և Արձանը ճամբայ հանեցին Բիւզանդիոն գա-  
լու համար , որոնք երկու ամփակ մեկնած են արդէն :

ԴԵՒՌՆԴ .— Ի՞նչ , հոս չե՞ն անոնք :

ԵԶՆԻԿ .— Ո՞չ , եղբայր : Մենք ալ եկանք զանոնք  
հոս գտնելու յօյսով , բայց մեր յոյսն ի դերեւ ելաւ :  
Զարմանալի է որ ճամբան ալ հանդիպած չէք . ո՞ր ճամ-  
բով եկաք :

ԴԵՒՌՆԴ .— Մելխորինէի (Մալաթիա) ճամբով ե-  
կանք , սակայն առանց կեսարիա հանդիպելու : Հոն կը  
սպասեն արդեօք տակաւին :

ՅՈՎՍԵՓ .— Զձեղ ո՞վ զրկեց ուրեմն :

ԿՈՐԻՒՆ .— Վարդապետները չեն գիտեր մեր գա-  
լը : Երբ լսեցինք որ Եղեսիայէն մեկնած էք դէպի Բիւ-  
զանդիոն , մենք ալ ճամբայ ելանք ձեզի միանալու և  
մեր մեկնումը նամակով իմացուցինք Մաշտոց վարդա-  
պետին :

ՅՈՎՍԵՓ .— Իրա՞ւ կ'ըսէք , ըսել է դո՞ւք ալ չու-  
զեցիք զուրկ միայն հէլէն դպրութեան զանձերէն ու  
ինքնակամ միացաք մեզի :

ԿՈՐԻՒՆ .— Ի՞նչու չէ . կուզէիք միայն դո՞ւք օդ-  
տակար ըլլալ թարգմանութիւններով : Մենք կը կարծենք  
թէ երկու անձի գործ չէ այդ :

ԵԶՆԻԿ .— Իրաւո՞ւնք ունիք , իրաւո՞ւնք ունիք :  
Մւր էր թէ մեր վարդապետները դեռ ուրիշ շատերը  
զրկէին Եղեսիա , Բիւզանդիոն կամ Սթէնք , թէ՛ հելէն  
դպրութեան ու իմաստասիրութեան ծանօթանալու և  
թէ՛ նուրիական գանձերով ճոխացած , իրենց հայրենիքն  
ալ փարթամացնելու :

ԴԵՒՌՆԴ .— Ի՞նչ ըրիք , ի՞նչ թարգմանութիւններ  
կատարեցիք Եղեսիայի մէջ :

ԵԶՆԻԿ .— Բաւական պաշտը հաւաքեցինք : Եղե-  
սիոյ Պարսից դպրոցի մատենադարանը մեր տրամադրու-  
թեան տակ գրուած էր : Գեղեցիկ ասորի գրչագիրներ  
գտանք : Կատարեալ և ճոխ Աստուածաշունչ մատեսն  
մալ գտանք և ո՞չ միայն չանացինք թարգմանել , այլև  
թախանձանօք ծախու առինք զայն : Վերջը կը տեսնէք  
մեր պայուսակին մէջ , տեսնէք ի՞նչ պատուական բան  
մըն է : Ս . Եփրեմի ամբողջ գործերը , մեկնութիւնները,  
աղօթքները , երգերը , ամէնքն ալ թարգմանեցինք հա-  
յերէնի : Եւսեբիոսի Եկեղեցական Պատմութեանը մէկ  
ասորերէն օրինակը տեսանք ու ամբողջապէս թարգմա-  
նեցինք : Տեսէ՛ք ահա միը եղբայրը՝ Յովսեփ յունարէն  
բնագրին բաղդասութիւնը կ'ընէ այժմ : Լաւ կ'ըԱպյ որ  
յունարէնի թարգմանութիւնն ալ ունենանք :

ՅՈՎՍԵՓ .— Այո՛ , անշուշտ : Պէտք է ես Յունա-

թէնի թարգմանութիւնն ալ կատարեմ:

**ԵԶՆԻԿ.** — Ասոնցմէ զատ թարգմանեցինք նաև Եղեսիոյ գարձին պատմութիւնը, զոր գրած է Ղերուբնա ասորին. Զգօն Պարտիկի կամ Յակոբ Մծբնայ հայրապետին «Զգօն» անուն գիրքը, Պօղոս առաքեալի առ Կորընթացիս Դ. թուղթը, որոնք մեր և Յունաց Աստուածաշունչերուն մէջ չի կան: Ասոնցմէ դուրս ուրիշ բաւական թարգմանութիւններ ըրինք ու դեռ մտադիր էինք Եփրեմի աշակերտներու բոլոր գործերն ալ թարգմանել հայերէնի, բայց լաւ համարեցինք անցնիլ Բիւզանդիոն, քանի որ հոս շատ աւելի գանձեր կան թարգմանելիք:

**ԵԵՒՈՆԴ.** — Դուք շատ գործ տեսեր էք, եղբայրներ: Եթէ այդ գործերը մեր գպրոցներուն մէջ տարած ուին, սքանչելի արդիւնքներ պիտի տան:

**ԿՈՐԻՒԽՆ.** — Իրաւունք ունիք, Ղետնդ եղբայր: Կը հիանամ մեր ընկերներու աշխատասիրութեան և անձնութեան վրայ: Բայց միենոյն ժամանակ կը նաւիսնձիմ ալ իրենց վրայ: Խնչ, այդքան թարգմանութիւններ կատարեր են, այդքան գործեր տեսեր են ու մենք բան մըրած չունինք տակաւին:

**ՅՈՎԱՅՐ.** — Շնորհաւորելի է քու բարի նախանձդ. արդէն ձեր դէպի Բիւզանդիոն ճամբայ ելնելու որո-

շումը կը ցուցնէ այդ: Եւ վատահ եղէք, սակայն, թէ աշխատող մարդոց համար գործ չի պակսիր. այնպիսի գործեր որոնք պատիւ կը բերեն զայն կատարողին:

**ԵԶՆԻԿ.** — Այո՛, այ՛ո, ընկերներ. հոս մենք շատ գործ ունինք տեսնելիք. մենք ո՛չ միայն այս տեղի Բարձրագոյն վարժարանի դասընթացքին կրնանք հետեւիլ, այլև բոլոր սուրբ հայրերու գրուածներուն թարգմանութիւնովը զբաղել: Մանաւանդ այս վերջնը մեր պաշտօնն ալ է: Արդէն չնորհիւ տեղւոյս Յունաց ախեղերական պատրիարք՝ Մաքսիմիանոս եպիսկոպոսին՝ բաւական լաւ ընդունելութիւն մը գտած ենք ու կը գտնենք տակաւին:

**ԿՐԹԻԽՆ.** — Իրա՞ւ կ'ըսէք, ի՞նչպէս ծանօթացաք, ի՞նչպէս ընդունեց զձեզ, ի՞նչ ըրաւ:

**ԵԵՒՈՆԴ.** — Մելիտինէի յոյն եպիսկոպոսէն ալ թուղթ մը բերած ենք Մաքսիմիանոսի ուղղուած, մեզ կը յանձնարարէ, ուրեմն ընաւ պէտք չը պիտի ունենանք այդ յանձնարարականին:

**ԵԶՆԻԿ.** — Լա՛ւ է որ այդպիսի թուղթ մունիք. այդ միջոց մը Կ'րլայ զձեզ քիչ մ'աւելի շուտ ծանօթացնելու: Մաքսիմիանոս բաւական բարի մարդ մըն է: Երբ առաջին անգամ իրեն ներկայացանք և յայտնեցինք թէ Հայոց Սահակ եպիսկոպոսին կողմէ զրկուած ենք

Եղեսիա և Քիւղանդիսն՝ եկեղեցական հայրերը նոր գըտանուած հայերէն գրերով թարգմանելու համար, շատ սիրալիք ընդունելութիւն մըրբաւ մեզի։ Յանձնաբարեց որ Քիւղանդիսնի բոլոր մասնադարանները բանան մեր առջեւ ու դիւրութիւններ տան մեր աշխատութեան համար։ Յայտնեց նաև թէ, եթէ փափաքինք աստուածաբանկան ձեմարանի դասրնթացքին հետեւիլ, ինքը պատրաստ է ամէն դիւրութիւն ընծայել մեզի։ Շատ շնորհակալ եղանք և սիրով ընդունեցինք իր բարեացակամ առաջարկները։

ՅՈՎԱԲԵՓ. — Սյո՛, մանաւանդ ձեմարանի մասին եղած առաջարկը շատ սիրելի եղաւ մեր եղբօր՝ Եղնիկին, որ սկսաւ եկեղեցական գիտութիւններու և իմաստասիրութեան դասընթացքին հետեւիլ։

ԵԶՆԻԿ. — Ճիշտ է որ շատ կը սիրեմ գիտութիւնները, ինչպէս նաև իմաստասիրութիւնը, որովհետեւ կ'ուղեմ հաւատալ թէ գիտութիւնները կրօնի և բարյականի յառաջդիմութեան ու լուսաւորութեան կը նըսպատճն։ Միայն թէ մեր երկրին համար այժմ իմաստասիրութիւն ընելէ աւելի թարգմանութիւններ ընել կարեոր է և պիտանի։ Եւ մնաք լաւ կ'ըլլայ որ այդ դերին մէջ մնանք ու փայլենք։

ԿՈՐԻԻՆ. — Ի՞նչ կ'ըսէք, եղբայր, երբ ընական

հանձարներ չեն պակսիր մեր մէջ, ինչո՞ւ չի փայլին անոնք իրենց բուն արժանիքին մէջ, Տեսէ՛ք, Պրայերեսիսուը, այն հայ հանձարը որ Հելլէններու անգամ ուսուցիչ եղած ըլլալը լուսած ենք այնքան պարծանքով։

ԵԶՆԻԿ. — Իրաւո՛ւնք ունիք, եղբայր։ Ես ըսել չուզեցի թէ մնաք պէտք չէ փայլինք իմաստասիրութեան կամ փիլիսոփայութեան նման ձիւղերու մէջ, այլ մեր երկրին համար աւելի օգտակար է այժմ թարգմանել քան փիլիսոփայութիւն ընել։ Իսկ գալով Պրոյերեսիսուի, այդ հսկայ հայ հանձարը, որուն համբաւը հաղիւ Հայաստան հասած է, մեզի՝ Հայերուս փառք մըն է։ Դեռ անցեալ օր, Մաքսիմիանոս եպիսկոպոսն ու կայսրը մեծ գովիճառով խօսեցան անոր մասին։ Հայն թէ մեր Պրոյերեսիսուը կամ Պարոյը ուսուցիչ եղած է Յուլիանոս կայսեր, Յարսեղ Կեսարացի և Գրիգոր Նազիանզացի մեծ հայրերուն։ Աթենական ատեաններուն վրայ պանծացուցած է ան հայ միտքին իմաստասիրական ընդունակութիւնն ու արժանիքը։ Հոս, Բիւզանդիսնի կայսերական պալատներուն մէջ ալ հսկեցուցած է իր ձայնը, մըցումի ելած ու յաղթած է ամէնուն։ Յոյներն իրենց ամէնէն նշանաւոր գիտուններէն մին կը պատռեն զայն։ Հոսմայեցինները պղնձէ արձան մը կանգնած են անոր ի վշատակ և վրան արձանագրած են։ Թագուհին Հռու,

բագաւորի բանին , այսինքն Պերճախօսութեան բագաւոր Պարոյրին :

ԴԵՒՌՆԴ .— Այդքան մեծ հանձար մ'ունեցած ենք ու մենք չենք դիտեր . . .

ՅՈՎՍԵՓ .— Ու տակաւեն քամիները կրնանք ունենալ , որոնք Հայուն փառքը պիտի ըլլան :

ԵԶՆԻԿ .— Ինչո՞ւ չէ : Ինձ այսպէս կը թուի թէ մեր ընկերներէն Դաւիթը բնական ընդունակութիւն մ'ունի իմաստափրութեան , և ինքն ալ սիրահար է արդէն : Եթէ Բիւզանդիոն գալու ըլլայ ան , գուցէ կարենաց այնքան ուռաջանալ որ անյափ տիտղոսն ալ ձեռք բերէ շատ դիւրութեամբ : Փափաքելի էր որ մեր վարդապետները՝ Սահակ և Մեսրոպ՝ Դաւիթն ալ Պոլիս դրկելու ջանային . իրենց պատիւ պիտի բերէր անշուշտ :

ԿՈՐԻԻՆ ԵՒ ԴԵՒՌՆԴ .— Այս' , անշուշտ :

ՅՈՎՍԵՓ .— Բայց Արձանն ու Յովհանն Մամդակունին ո՞ւր մնացին . այսքան ժամանակէ ճամբայ եւեր են , տակաւին մէջտեղ չկան :

ՍՊԱՍԻԱՌ (ներս մՏնելով) .— Մաքսիմիանոս եպիսկոպոսի բարապանին առաջնորդութեամբ երկու երիտասարդներ եկած են ձեղ տեսնելու :

ԵԶՆԻԿ .— Որո՞նք կրնան ըլլալ արդեօք , գուցէ Աստուածաբանական ձեմարանի երկու ընթացաւարտ-

ներն են , որոնք փափաք յայտնած էին մեր եկեղեցւոյ դաւանութեան մասին առանձին տեսութիւն մ' ունենալ մեր հետ : Ժամանակը չէր թէպէտ , բայց ի՞նչ ընենք : (Սպասաւորին դառնալով) թող ներս հրամեն :

(Սպասաւոր կը մեկնի: Եզրիկ ոսքի կ'ելնէ եւ կը յառաջանայ դեպի դուռ):

## ՏԵՍԻԼ Գ.

ՆԱԽԱՐԴՆԵՐԸ ԵՒ ՅՈՎՀԱՆ , ԱՐՁԱՆ

ԵԶՆԻԿ (Դրան մօս՝ ձեռքերը բացած) .— Ահ , ՅՈՎՀԱՆ և ԱՐՁԱՆ , վկրչապէս եկաք :

(Ամենիր միասին ընդուն ոսքի կ'ելնեն ու կը դիմեն դեպի նորեկներ):

ՅՈՎՀԱՆ , ԱՐՁԱՆ .— Ողջո՞յն ձեզ :

ՅՈՎՍԵՓ .— Վերջապէս . . . վերջապէս . . . (Կողագուրուին; «ողջո՞յնի» ձեռվ):

ՅՈՎՀԱՆ (Աղջազմւուելով) .— Այս ի՞նչ բախտաւորութիւն է , ամէնքնիս ալ հոս ենք :

ԱՐՁԱՆ (Նոյնպէս ողջազմւուելով) .— Ու ախալի՛ գուշագուպութիւն :

ԵԶՆԻԿ (Արուներ ներկայացնելով) .— Հրամեցէք , նըւ-

առեցէք : (Կը հնտին) : Պատոմեցէք , տեսնենք , ո՞ւրկից կուգաք , ի՞նչպէս եկաք :

ՅՈՎԱՀԱՆ . — Եղասիր Եղափկ , ձեր և եղբայր Յովաչի Եղեսիա մեկնելէն ետքը , Սրձանն ու ես ա՛յնքան թախանձեցինք Սահակ հայրապետին ու մեր Մեսրոպ վարդապետին , որ այլես ձանձրացան ու տեղի տուին Քրիզանդիոն գալու մեր փափաքին : Եւ թէպէտ որոշած էին ձեր վերադարձէն ետք զձեզրիկել նորէն , բայց աւելի նպատակայարմար նկատեցին նախ զմեզ ճամբայ հանել ու եթէ դուք ալ գառնալով փափաք յայտնէիք , ձեզ ալ զրկել : Մեղի յանձնարարական թուղթեր առուին Կեսարիոյ յոյն մետրոպոլիտին ու զօրապետին , Կ . Պոլսոյ Յունաց պատրիարքին ու կայսեր և այլն ուղղուած : Երբ Կեսարիա հասանք , շատ մեծ ընդունելութիւն մը գտանք ամէնէն . ըլլայ մետրոպոլիտէն , ըլլայ զօրապետէն , ըլլայ յոյն հոգուորական դասակարգէն կամ ժողովուրդէն : Հօն , Ս . Բարսեղի հիմնած մատենադարաններէն մէկին մէջ մէկ քանի թանկագին բնագիրներ գտնելով փափաղեցանք անոնց թարգմանութիւնը կատարել : Եւ իրաւոյէ մէկ երկու ընտիր գրչագիր օրինակներու վրայէն թարգմանեցինք Ս . Բարսեղի ճառերէն միծ մասը . Գրիգոր Նիւսացւոյ , Գրիգոր Նազիանզացւոյ և ուրիշ սուրբ հայրերուն ճառերէն մէկ քանին և այլն : Եւ հազիւ կրցանք

գործիրնիս աւարտուել ու օձիքնիս աղատել կեսարիայէն : Այսօր իսկ հասանք մայրաքաղաք : Ահմելքապէս ներկայացանք Մաքսիմիանոս եպիսկոպոսին յանձնելով իրեն մեր վարդապետներուն ու թագաւորին և կեսարիոյ մետրոպոլիտին մեզ տուած յանձնարարականները : Սիրով ընդունեց զմեզ և յայտնեց թէ արդէն ուրիշ հայ պատասիներ հոս կը գտնուին ճիշտ միւնոյն նպատակով : Խոստացաւ ամէն դիւրութիւն ընծայել մեզի , ինչոք ձեզի ալ խոստացեր է . յանձն առաւ նաև յարմար առիթով մը ներկայացնել զմեզ կայսեր : Սպա իր բարապաններէն մէկը դնելով մեզի հետ ձեր ընակարանն առաջնորդել յանձնարարեց : Ահա մեր պատմութիւնը , ընկերներ , և ես ուրախ եմ որ թէպէտ տարբեր ճամբաններով և իրարմէ անկախ , դիմած ենք , սակայն , միւնոյն նպատակին :

ՅՈՎԱՀԱՆ . — Ե՞րբ իմացաք մեր հոս գտնուիլլ :

ՅՈՎԱՀԱՆ . — Կեսարիա կը գտնուէինք տակաւին , երբ մեզի լուր հասաւ թէ զէպի Պոլս ճամբայ ելած էք : Նամակ մ'ալ Մաշթոց վարդապետէն ընդունեցինք : որ կ'իմացնէր ձեր մեկնումը և կը յանձնարարէր փութով միանալ ձեզի ու միամին գործել : Այս միտքով նամակ մ'ալ ձեր հասցէին գրած ու ներփակած էր մերինին մէջ : Ահա ձեր նամակը : (Գրաբնին նամակ մը կը համեմէ եւ կը յանձնէ եզնելի , որ կնիմէր կը բակի եւ կ'սկսի կարգաւ) :

ԵԶՆԻԿ . (կարդալով) . — «Սիրելի որդեակը , Եղնիկ ,  
Յովսէփ , Ղևոնդ , Կորիւն ,

«Կ'իմանանք որ , բարի նախանձով լեցուած , ճամբայ  
ելած էք դէպի Բիւզանդիոն , գիտութեանց և ուսմանց  
ոստանը : Կը յանձնարարենք ձեզ կատարել փութով ձեզի  
վստահուած պարտականութիւնները : Զանացէք ուսմանիլ  
և ամբարել կարելի եղածան չափ շատ բան՝ քիչ ժամա-  
նակի մէջ : Ձեր Հայրենիքը ձեզի կ'սպասէ , ձեր մայրե-  
նի վարժաբանները ձեր բերելիք գանձերուն կը նային :  
Զանացէք որքան կարելի է ձեռք բերել ու հայցնել  
Ս . հայրերու բոլոր կարեոր գրուածները : Անոնք պէտք է  
մեղք ու կաթ լինին ձեր մատաղերամ հայրենակիցներուն  
համար : Դո՛ւք պիտի ըլլաք մեր երկրին ձմարիտ առաք-  
եալները և քարոզիչները : Աշխատեցէք միշտ ձեր Հայրե-  
նիքն ունենալով նշանաբան , եթէ դուք պիտի կրթուիք ,  
հարկ է որ կրթուիք ձեր երկրին համար , եթէ պիտի  
զարդանաք՝ պէտք է զարդանաք մեր աշխարհին համար ,  
եթէ պիտի աշխատիք ուրիշներուն հոգոյն փրկութեանը ,  
պէտք է աշխատիք ամնէն առաջ ձեր հայրենակիցնե-  
րուն հօգոյն համար : Հէլլէն մտքին դանձերը մինչեւ  
ցարդ մեռեալ տառ մ'էին ձեզի և ձեր Հայրենիքին հա-  
մար . այսուհետեւ ձեր մշտնջենական զբաղումին առար-  
կան ու աղբերակը թող լինին : Հայրական ողջոյններ

ամէնուդ ալ Սահակ հայրապետէն :

Ողջունիւ սիրոյ , մնամ աղօթարար  
«ՄԵՍՐՈՒՄ-ՄԱՇԹՈՑ»

ԿՈՐԻԻՆ . — Միշտ միւնոյն գաղափարապաշտ Մաշ-  
թոց վարդապետն է , ո'րքան բազմարդիւն՝ նոյնքան  
համեստ :

ԴԵԻՌԵԴԻ . — Բախսոււ որութիւն մըն է Հայաստանի  
համար այսպիսի վարդապետ մունեցած ըլլան իրեն ու-  
սուցիչ ու գործիչ :

ՈՐՉԱՆ . — Խնչպէս նաև մեղի համար :

ԵԶՆԻԿ . — Երբ մեկնեցաք երկրէն , ի՞նչ կ'ընէին մեր  
վարդապետները և ընկերակիցները :

ՅՈՎՀԱՆ . — Ձեր դէպի Եղեսուիս մեկնումէն ետքը ,  
Մեսրոպ չի թողուց երբէք իր ուսուցչական-առաքելա-  
կան պաշտօն : Շաղդոմքի մեր առաջին դպրոցէն ետք  
անցաւ Սպեր . հոն դպրոցներ բացաւ և վերակացու-  
կարգեց Կևոնդն ու Ենովքը :

ԴԵԻՌԵԴԻ . — Ճիշտ է , այս' :

ՅՈՎՀԱՆ . — Գերջանի մէջ ուսուցիչ և վերակացու  
դրաւ Գսիթ եպիսկոպոս , Եկեղեաց գաւառին մէջ՝ Դա-  
նանը և ապա դարձաւ Այրարատ , ուրկէ վերսախն ճամ-  
բայ ելաւ դէպի Գողթն գաւառ : Գիտէք հարկաւ որ

Մեսրոպ վարդապետը գրեթէ ամբողջ Հայաստանը շրջեւ  
լին ետքը, անցաւ նաև Վրաստան, այնտեղի հայախօս  
բնակչութեան համար ալ դպրոցներ բանալու: Ո՞չ միայն  
իր նպատակն իրագործեց, այլև Վրաց լեզուին համար  
ալ այլուրինք մը պատրաստեց ու դպրոցներ բացաւ:  
Հոն իր դրած վերակացուներն էին Խորենացի Տէրը և  
Տարօնեցի Մուշէն: Իսկ Ազուանաց երկիրը իր բայած  
դպրոցներու վերին անուշը եղաւ մեր աշակերտակից-  
ներէն Յովիսաթան:

ԿՈՐԻՒՆ. — Մեր Մաշթոց վարդապետը ճշմարիս  
առաքեալ մը չէ հապա ի՞նչ է:

ԱՐԶԱՆ. — Վարդապետի մասին շատ աւելի գեղե-  
ցիկ կրնայ խօսիլ եղբայր Կորիւնը, քանի որ գրեթէ  
միշտ անոր հետ կը գտնուէր:

ՅՈՎՀԱՆ. — Սյո՛, Կորիւն և Ղետոնդ պէտք է քիչ  
մաւելի տեղեկութիւններ հաղորդեն ձեզի և մեզի,  
քանի որ մենք իրենցմէ աւելի կանուխ բաժնուեցանք  
մեր վարդապետներէն:

ԿՈՐԻՒՆ. — Գրեթէ ամէն ինչ ըստուեցաւ արդէն:  
Մաշթոց վարդապետը, զոր ես պիտի համարձակիմ Սուրբ  
կոչելու, իր բովանդակ կեանքին մէջ եղած է ու կ'ըլլաց  
առաքեալ՝ քարոզիչ և ուսուցիչ: ուր որ կ'երթայ իր  
ոտքի հետքերուն վրայէն գիտութեան ու կրօնի լոյսը

կը տանի կարծես: Հայաստան, մէկ ծայրէն միւսը ոգե-  
ւորութեան ու ցնծումի մէջ է: ամէն կողմ դպրոցներ  
կը բացուին: ամէն տեղ աւետարաննին խօսքը կը լսուի:  
Հայը դեռ նոր կ'զգայ թէ Հայ է:

ԵԶՆԻԿ. — Երբ շատ իրաւամբ կը թուենք Մաշ-  
թոցի արժանիքն ու գործունէութիւնը, պէտք չէ մոռ-  
նանք նաև անար գլխաւոր գործակցին՝ Սահակ հայրա-  
պետի անունը:

ԱՐԵՆՔԸ ՄԻԱՍԻՆ. — Քա՛ւ լիցի:

ԵԶՆԻԿ. — Սուրբ Գիրքի թարգմանութեան մէջ  
Սահակ՝ Պարթևի դերը մեծ է: իրը լեզուազէտ, իրը  
դիւնապէտ և իրը կրօնաւոր իր կատարած գործը շատ  
բարձր ու գնահատումի արժանի է: Մենք իրը թարգ-  
մանիչ կ'զգանք թէ որքան գժուար ու երկայնամիտ  
սրտի գործ է Աստուածաշունչի նման բաղմերանդ ու  
նրւին գրքիմը թարգմանութիւնը:

ՅՈՎՀԱՆ. — Պէտք է խոստովանիլ իրաւցնէ թէ  
Սահակ և Մեսրոպ մեր զոյդ առաքեալներն ու լուսաւո-  
րիչներն եղած են, իրարու գործ ու պաշտօն լրացնելով:

ԱՐՁԱՆ. — Պատի՛ւ և յարգանք մեր այս մեծ մար-  
դոց, բայց ես կը կարծեմ թէ մեր լուրջ և օգտակար  
գործունէութեամբ է միայն որ սիտի կրնանք անոնց  
արժանի աշակերտաներն ըլլալ: Սյապէս չէ, սիրելի՛ Եղ-

նիկ, սիրելի՛ ընկերներ :

ԵԶՆԵԿ.—Հա՛րկաւ, հա՛րկաւ : Անոնք իրենց բովանդակ անձը դրած են իրենց գործին մէջ : Անձնութերութեան տիպարներն են անոնք : Մենք շատ բան կը պարախնք, իրենց . ինչպէս մենք, նոյնպէս բովանդակ Հայութիւնը : Բայց մեր վրայ պարտքեր ալ կը ծանրանան : Մենք զրկուած ենք գործի մը, զոր հարկ է զլուխ հանել : Ինչպէս գրած էր մեր վարդապետը, մենք պարտինք «ուսանիլ և ամբարել կարելի եղածին չափ շատ բան՝ քիչ ժամանակի մէջ» : Մեր Հայունիքը մեզի կ'սպառէ : Մենք պէտք է դանձերով դառնանք երկիր : Հիմակ, ինչպէս Մաքսիմիանոս եպիսկոպոսն ալ յանձնարարեց, մենք պէտք է մեւնայն ատեն թէ՛ հետեւնք հէլլէն ուսմանց և իմաստափրութեան և թէ՛ կատարենք լաւագոյն հեղինակութիւններու թարգմանութիւնները : Հայաստանի համար քաղաքակրթութեան ու յառաջդիմութեան ճամբանները բացուած են այսուհետեւ : Մեր աղջը իր Ազգ փրկութեան ճամբուն մէջ է այլես : Հայը հին ազգերու նման, ինչպէս են Մարք, Ասորեստանցիք, Փիւնիկեցիք և այլն, ա՛լ կորառւելու սահմանուած չէ : Իր ինքնութիւնը պիտի կրնայ պահել : Մեզի կը մնայ միայն ազգային նկարագիրը շինել, ուրիշ ազգերու մտքի արտադրութիւնները հայցնելով հանդերձ, Մա-

հակի և Մեարուպի ձեռնարկը պէտք է իրականացնենք, մեր բոլոր ոյժերովը, նուիրուինք անոր : Այս հիւրընկալ ափերուն վրայ մեր Հայունիքին համար փառք ու գանձ պէտք է վնասուենք :

(ԱԾԲԻ ԵՂԱԼԵԼՈՒ) — Ի գո՛րծ ընկերներ, ի գործ . . .

ԱՄԷՆՔԸ ՄԻՍԱԽԵՆ . (ԱԾԲԻ) — Ի գո՛րծ, ի գո՛րծ . . .

(Վարագոյր կ'իջնէ)



«Ազգային գրադարան



NL0330396

25.278

գ. ի ւ

60 ՓԱՐԱ